Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1152-02.05.2011-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Քաղաքացիական կացության ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 8-ի ՀՕ-9-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունում «Երևան քաղաքում ամուսնության» բառերը փոխարինել «Ամուսնության» բառով:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «գտնվող» բառը հանել.

2) 1-ին մասի բ) կետի «մշտապես ապրող» բառերը փոխարինել «գտնվող» բառով:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«4. Եթե երեխայի ծննդի պետական գրանցումը կատարվում է ամուսնության մեջ գտնվող անձանց, ամուսնության մեջ չգտնվող տղամարդու կամ կնոջ հայտարարությամբ, որոնք օգտվել են օրենքով նախատեսված վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից, ապա ծննդյան մասին սահմանված ձևի փաստաթղթի հետ միասին ներկայացվում է նաև փոխնակ մոր հետ օրենքով սահմանված կարգով կնքված պայմանագրի մեկ օրինակը:»:

Հոդված 6. Օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«4. Ամուսնության մեջ գտնվող անձինք, ամուսնության մեջ չգտնվող տղամարդը կամ կինը, որոնք օգտվել են օրենքով նախատեսված վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից, ծննդի պետական գրանցման գրքում գրանցվում են որպես ծնողներ (ծնող)՝ փոխնակ մոր հետ կնքած պայմանագրի հիման վրա:»:

Հոդված 7. Օրենքի 27-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«1. Ամուսնության պետական գրանցումն իրականացվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմին ամուսնացող անձանց կողմից ներկայացված համատեղ դիմումում նշված օրը, սակայն ոչ շուտ քան դիմումը ներկայացնելու օրվան հաջորդող 10-րդ օրը և ոչ ուշ քան երեք ամիսը: Ամուսնացող անձանց համատեղ դիմումի հիման վրա ամուսնության պետական գրանցման 10 օրյա ժամկետը կարող է կրճատվել հարգելի պատճառների առկայության դեպքում: Ամուսնության գրանցման ժամկետը կրճատելու համար հիմք հանդիսացող հարգելի պատճառներ են համարվում՝

1) ամուսնացող անձանց համատեղ երեխա (ներ) ունենալը.

2) ամուսնացող կնոջ հղիությունը (առնվազն 12 շաբաթական).

3) ամուսնացող անձի զորակոչվելը ժամկետային զինվորական ծառայության.

4) ամուսնացող անձի Հայաստանի Հանրապետության զինված ուժերում ծառայության կամ ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվելը.

5) Հայաստանի Հանրապետությունում ամուսնացող օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, օտարերկրյա պետությունում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների միմյանց կամ օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հետ ամուսնության դեպքում ամուսնացողների կամ նրանցից մեկի Հայաստանի Հանրապետության տարածքից երկարատև ժամանակով մեկնելու (բացակայելու) դեպքում.

6) ամուսնացող անձի ծանր հիվանդությունը.

2) լրացնել նոր 1.1 և 1.2-րդ մասերով հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Սույն հոդվածի 1-ին մասում նշված հարգելի պատճառները պետք է հաստատված լինեն համապատասխան փաստաթղթերով՝ (կնոջ հղիության վերաբերյալ բժշկական տեղեկանք, երեխայի ծննդյան եւ հայրության ճանաչման վկայական, զինվորական ծառայության վայրից տեղեկանք, Հայաստանի Հանրապետության տարածքից մեկնելու փաստը հաստատող փաստաթուղթ):

1.2. Ամուսնության պետական գրանցման ժամկետը՝ ելնելով կոնկրետ հանգամանքներից, կարող է կրճատվել նաեւ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության պետի թույլտվությամբ:»:

Հոդված 8. Օրենքի 56-րդ հոդվածի 1-րդ մասում «խնդրանքով» բառը փոխարինել «դիմումի հիման վրա» բառերով:

Հոդված 9. Օրենքի 58-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունում «խնդրանքով» բառը փոխարինել «դիմումի հիման վրա» բառերով:

Հոդված 10. Օրենքի 76-րդ հոդվածի 3-րդ մասում «գտնվող» բառը հանել:

Հոդված 11. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առարկության, առաջարկության հեղինակը,գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Դավիթ Հարությունյան	1. Նախագծի 7-րդ հոդվածում՝ նոր խմբագրությամբ շարադրված օրենքի 27-րդ հոդվածի առաջին մասում հաջորդող «7-րդ» բառը փոխարինել «10-րդ» բառով. 2. Ն ույն տեղում ամուսնության գրանցման ժամկետները կրճատելու համար հիմք հանդիսացող հարգելի պատճառների ցանկը ավելացնել 6-րդ կետով, հետևյալ բովանդակությամբ. «6.) ամուսնացող անձի ծանր հիվանդությունը.»:	1. Ընդունվել է 2. Չի ընդունվել	1. Նախագծի 7-րդ հոդվածում՝ նոր խմբագրությամբ շարադրված օրենքի 27-րդ հոդվածի առաջին մասում «7-րդ» բառը փոխարինվել է «10-րդ» բառով. 2. Նախագծի 7-րդ հոդվածում՝ նոր խմբագրությամբ շարադրված օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է հետևյալ բովանդակությամբ նո՝ 6-րդ կետով. «6.) ամուսնացող անձի ծանր հիվանդությունը.»: